Մրցույթ՝ «Երևանի Գևորգ Վարդանյանի անվան հ.192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Տեխնոլոգիա» (14 դասաժամ), «Ռուսաց լեզու» (12 դասաժամ), «Պատմություն» (ռուսերենով ուսուցմամաբ դասարանների համար, 9 դասաժամ), «Կենսաբանություն» (ռուսերենով ուսուցմամաբ դասարանների համար 4 դասաժամ), «Քիմիա» (ռուսերենով ուսուցմամաբ դասարանների համար, 4 դասաժամ) և «Ֆիզիկա» (ռուսերենով ուսուցմամաբ դասարանների համար, 4 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3×4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թվականի հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 8-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. նոյեմբերի 10-ին՝ ժամը 14:30-ին**, **Գևորգ Վարդանյանի անվան հ.192 հիմնական դպրոցում**, հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն, 2-րդ թաղամաս:

Տեղեկությունների համար զանգահարել (010)36-98-80 հեռախոսահամարով: